

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24.01.2019 16:30



Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 11.01.2019 թվականի նիստում ՀՀ փաստաբաններ պալատի կանոնադրության 17.3 կետի 17-րդ ենթակետի համաձայն լսվել և հաստատվել է **ՀՀ փաստաբանների պալատի 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):**

Ֆինանսական հաշվետվությունն արտահայտում է 2018 թվականի ընթացքում (01.01.2018թ.-31.12.2018թ.) Փաստաբանների պալատի իրականացրած ֆինանսական գործառնությունների մասին ֆինանսական տվյալները՝ Փաստաբանների պալատի խորհրդի 20.12.2017թ. 26/3-Լ որոշմամբ հաստատված ՀՀ փաստաբանների պալատի 2018 թվականի տարեկան բյուջեի հետ համեմատականով: Ֆինանսական հաշվետվության միջոցով ներկայացված են նաև հաշվետու ժամանակահատվածում Փաստաբանների պալատի գույքի օգտագործման մասին տեղեկությունները:

«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունը հաստատելու հարցը քննարկելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.01.2019թ. թիվ 1/1-Լ որոշումը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունը հրապարակվել են ՀՀ փաստաբանների պալատի կայքի «**ֆինանսական հաշվետվություններ**» էջում՝ միայն փաստաբանների հասանելիության ձևաչափով *:

2019 թվականի հունվարի 30-ին, ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում տեղի է ունենալու ՀՀ փաստաբանների պալատի նախագահի և ֆինանսական տնօրենի հանդիպում փաստաբանների հետ՝ ֆինանսական հաշվետվության (Փաստաբանների պալատի եկամուտների և ծախսերի) հետ կապված փաստաբաններին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

*«ֆինանսական հաշվետվություններ» էջը գտնվում է «Գրադարան» - «Հաշվետվություններ» բաժնում: Այս բաժինը տեսնելու համար անհրաժեշտ է մուտք գործել անձնական էջ՝ համապատասխան դաշտերում հավաքելով մուտքանունը և գաղտնաբառը: Անձնական էջի մուտքանվան և գաղտնաբառի վերաբերյալ տեղեկատվությունը կարող եք ստանալ փաստաբանների պալատի աշխատակազմից:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }